ԿԱՆՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Բ.

ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Ամէն կերպով կ'աշխատինք արտաքին իմաստուններու նմանիլ, անոնց սոր ազա-բողանոքն պարծէին, և զԹանձր մօրուան առաջի արկանէին, և զգանգն պատուէին, և աչակերտքն յոխորտանային։ Բայց մենք ասոնցմէ ալ վատթար եղանք, որովհետև եթէ ասոնք այս թերութիւնները ունէին, սակայն ուսումնասէր էին, շատ նեղութիւն կը քաշէին, կարասի մէջ կը մըտնէին, լուռ կը կենային և կը վազէին հեռաւոր քաղաքներ, ուր կատարեալ իմաստասէրներ կային։ Եւ հոն ուրիշ բանով չէին զբաղեր, բայց եթէ, Ս. Գրոց ըսածին պէս, բան մը ըսելով և նոր բաներ լսելով. ասկից զատ, դրամ կը ծախսէին և երկար ատեն ուսումներու կը պարապէին, մինչև որ գիտութեան բոլոր մասերն ալ սերտէին։ Այս բոլորը ընելէ ետքը հապա կը ժառանգէին իմաստասէր անունը։

Բայց մենք այսպէս չենք. դեռ երէկուանոնք ու առջի օրուանոնք ենք, ուսանելէ առաջ գաւազան կ'ուզենք և դեռ չսկսած Աթոռ կը փնտռենք. «Նախ քան զուսանելն զպաւազան խնդրեմք, եւ յառաջ քան զսկսանիլն զաթոռոցն զտելիս խուզիմք»։ Մանկ քանի մը օր գիրքի վրայ կը նայինք, չենք ըսեր թէ կ'աշխատինք, և հապա տաս կամ շատ շատ քսան բանի կը տեղեկանանք, այն ալ կցկտուր ու անկատար, այնպէս մը կ'ուզինք և կը հպարտանանք՝ մենք գիտէ իմաստասէրներ կարծելով, որպիսին չըրին վերնատան մէջ Ս. Հոգւոյն փչումով չնորհները։ Ասոր համար սորվելու ծոյլ ենք, իսկ վարդապետելու փոյթ. հեղգ ենք կարդալու, բայց արագ ենք իմաստասիրելու համար։

Եւ այս բոլոր պղերգութիւններու վրայ՝ գիրքեր ալ կը հաւաքենք ոչ թէ կարդալու և քննելու համար՝ Տիրոջ պատուիրածին պէս, խրկելու համար անոնց վրայ և իմանալու հանճարի խօսքերը, իմաստասէրներուն ըսածներն ու առակները, այլ համբաւի և մեծութեան համար։

Այդ գիրքերէն չենք օգտուիր, այլ աւելի ևս կը գատապարտուինք. վասնզի կամ բնաւ չենք կարդար, կամ թէ կը կարդանք և չենք օգտուիր. որովհետև առանց ուսման և առանց մեծ յոգնութիւններու անկարելի է սմակացու լինել գրոց։ Ի՞նչ օգուտ ունի խցուած աղբիւրը ծարաւին կամ ծածկուած գանձը աղքատին. այսպէս են անոնք ալ, որոնք առանց ուսանելու գիրք կը ժողովեն։

Այս ըսածներէն ոմանք՝ նախնեաց կարգ ու կանոնը չեն հաւնիր, ոմանք՝ աղօթքներու կարգաւորութիւնը, ոմանք՝ պահոց սահմանները, ոմանք՝ տօներուն դրութիւնը, և կը ջանան նոր նոր սահմաններ ու կարգեր ներմուծել Եկեղեցւոյ մէջ։ Ասոնք նոր գպիրներ են ու նոր փարիսեցիներ՝ արժանի Քրիստոսի յանդիմանութիւններուն։

Ոմանք պատուիրաններէն շատերը կը լուծեն և խիղճ ալ չեն ըներ այս արհամարհանքին համար. ոմանք խստութիւններով հոգին կը հանեն. ոմանք ալ թուլութիւններով գահավէժ կ'ընեն. ամէնքն ալ ողբալի են, որովհետև մարդահաճութեան և փառասիրութեան համար կ'ընեն այս բաները։ Մէկը՝ որպէսզի խոտամբեր կրօնաւոր մը երևի, աւելորդ պատուիրաններ կը բռնէ. միւսը՝ որպէսզի քաղցր և ողորմած երևի՝ պատուիրաններէն շատերը կը լուծէ, որ կշտամբանք է իրեն համար և դատապարտութիւն լսողներու համար։ Ի՞նչ կ'արժէն ասոնք. մեզի հրամայուած է միջին ճամբէն երթալ և աջ ու ձախ չխոտորիլ։

Բայց մենք համբաւի և դրամի համար երկու կողմեր ալ կը խոտորինք և ուղիղ ճամբէն, «որ է պարզութիւն առանց կեղծաւորութեան», գուրս կը մնանք և այս բոլորին վրայ գիրար կը խածնենք և չենք գիտեր թէ ո՞ր հոգիի կը ծառայենք։ Ասոր համար է որ կը նախանձինք իրարու, կ'ատենք գիրար, կը թշնամանենք և կը բամբասենք. հակառակութեամբ կը վարուինք մեր ուսումնակիցներուն հետ. մեր ընկերին ձիրքերը (չնորհները) մեզի ցաւ կը պատ-

digitised by A.R.A.R.@

ճառեն. անոնց մասին եղած գովասանքը մեր սիրտը կը խանձէ. անոնց յառաջդիմութիւնը մեզ կը տրամիցնէ և անոնց պատիւը մեզ համար անպատուութիւն կը սեպենք։ Ասոր համար անոնց մասին պէտք կը խօսինք. տմարդի, աշխարհասէր, անափառ, մարդահաճոյ, կեղծաւոր, կռուարար, ամբարտաւան, հպարտ կ'ըսենք և ամէն տեսակ անպատուիչ անուններ կու տանք անոնց։

Մեր իմաստութիւնը, մա՛նաւանդ թէ տգիտութիւնը ստորնացաւ, գետնի հաւասար եղաւ։ Երանի՜ թէ պարզապէս երկրաւոր իմաստուններ ըլլայինք, և ոչ թէ լեկուազարներ և ունայնախօսներ. վասնզի երկրաւոր իմաստութիւնը քիչ օգտակար չէ մեզի համար։ Այս իմաստութիւնը արդէն չունինք, և երկնաւոր իմաստութենէն ալ շատոնց զրկեալ անցանք. և մեր պատճառով խափանեցան եկեղեցւոյ օրէնքները և մարդիկ անկարգ եղան։ Եթէ քանոնը ծուռ է, ո՛րչափ ևս առաւել ատով ուղղուողները. այսպէս մենք, որ ազգանոցու առջև խանութներ ենք, գրոց աշակերտներ, ուսմիկներէն ալ աւելի անկարգաբար կը վարուինք թէ՛ իրարու հետ և թէ՛ ուրիշներու հետ. մեզի աշակերտողներ ուրիշ ի՞նչ անկարգութիւններ չեն ըներ և չեն հաստատուիր ատոնց մէջ՝ մեզ պատճառ և օրինակ բրնելով իրենց մեղքերուն։ Եւ որովհետև ազին կծեցուցիչ ազգեցութիւնը կորսնցուցինք ու անհամցանք, ոտից կոխան և խաղ ու խայտառակ եղանք աշխարհի առջև, և մեր երեսէն է որ Աստուծոյ անունը և վարդապետութիւնը կ'անպատուուի։ Վասնզի ինչ՞ը չըսին մեզ համար. մեզմէ ոմանք կը բամբասուին իբր տմարդիներ ու ագահներ, ոմանք իբր սէգ և ամբարտաւան, ոմանք իբր գազանաբարոյ և անընտել, ոմանք իբր սրկրամոլ և չուայտ, ոմանք իբր կեղծաւոր և մարդահաճոյ, ոմանք իբր չրջող ու դատարկապորտ, ոմանք իբր վաւաշոտ և ցանկասէր, ոմանք իբր քնասէր և ծոյլ, ոմանք իբր իշամեղու՝ որ ուրիշներու վաստակով կ'ապրին։

Եթէ այսպէս և աւելի գէշ չըլլայինք, մեզ չէին երգիծաներ. և եթէ երգիծանուէինք՝ երանի՜ էր մեզ։ Ինչո՞ւ համար առաջին վարդապետները չէին նախատեր և չէին բամբասեր մա՛նաւանդ «գիրանելոն, գոր տեսաք այսօր մերովքդ», այլ կը սիրէին և կը պատուէին զանոնք հրեշտակներու պէս. վասնզի մեզի պէս տմարդի և Աստուծոյ խօսքին վաճառականներ չէին. այլ անոնց վարքն ալ, խօսքն ալ «ըստ Աստուծոյ էին և վասն Աստուծոյ»։ Վասն զի անոնք աղ էին պիղծերու վրայ և լոյս էին սուրբերու վրայ. խօսքէ աւելի գործքով «ունէին զվարդապետութիւնն». և եթէ երբեմն մէկը նախատէր զանոնք. բայց ասի Աստուծոյ և անաստուածներ յանդիմանելնուն համար էր. բան մը՝ որ երանութիւն կը համարուէր Տիրոջ խօսքին համեմատ։ Բայց մեզ եղած նախատինքը միխթարական բան մը չունի (անդ, եր. 119–122։ Հմմտ. եր. 75–76, 654, և այլն)։

Թէ որքա՞ն ճիշդ են Սարգիս Շնորհալիի գիտողութիւններն ու մեր ըրած վերլուծումները, այս բոլորը կը հաստատէ Ներսէս Շնորհալին, իր «Ընդհանրական»ին «Եւ կրօնաւորս, որ ի վանօրայս» և «Եւ առաջնորդս սրբոց ուխտից վանականաց» գլուխներով, ինչպէս նաև Լամբրոնացին իր այն քննադատութիւններով, որոնք կը կրեն «Հարցմունութիւն առ օրենս Քրիստոսի եւ հաստատութիւն թէ ո՛վ է պարս զվինակ եկեղեցական ասիճանի ձգել ընդ մարմնական տնհմուքեամբ» խորագիրը։

Մեր խնդրին հետ ուղղակի աղերս ունին «Ընդհանրական»ին այդ երկու գլուխները, որոնց իմաստը կ'ամփոփենք։

Ներսէս Շնորհալին, իբր Կաթողիկոս, իրեն ժամանակակից վանականներուն խօսելով՝ իր անդրանիկ Կոնդակին մէջ, զանոնք տգէտ չի գտներ բոլորովին։ «Դուք, կ'ըսէ, Ս. Գիրքը միշտ լսելով խրատուած էք արդէն և պէտք չունիք «մերոց գրոնաքեայ բանից», բայց մեր պարտքը կատարելու համար կը խօսինք»։

Ամենէն առաջ ճշմարիտ կրօնաւորութեան իմաստին վրայ կը ծանրանայ և կը չեշտէ պարկեշտ վարքի արժէքը, «արտաքիններուն» քով մանաւանդ։

Կը մեղադրէ այն կրօնաւորները, որոնք իրենց ընկերակիցները կը թողուն և առանձին կը բնակին, ոչ թէ միայնակեացներու պէս ճգնելու համար, այլ «վասն ագահութեան ախտի», որպէսզի իրենց անձնական

digitised by A.R.A.R.@

աշխատութիւնը ո՛չ թէ «հասարակաց եկեղեցւոյն», այլ միմիայն իրենց համար ամբարին։

Կ՚արգիլէ կրօնաւորներու բնակութիւնը գիւղերու և քաղաքներու մէջ. միայն թոյլ կու տայ անոնց՝ որոնք ճարկաւոր պաշտաւռով մը կը բնակին. «Պարտ և արժան էր, զի թէ պատահէր կրօնաւորաց ըստ ճարկաւոր ինչ պաշտաւռի բնակել յաշխարհի, իբրև զլուսատու լինել աստուածային և ուղիղ վարուքն ի մէջ նոցա, ի փառաց պատճառս անուանն Աստուծոյ, և ոչ ի հայհոյութեան. զայնպիսիսն մա՛նաւանդ յորդորեմք ի նոսն, քան թե արգելումք» («Ընդհանրական», տպ. Երուսաղէմ, 1871, եր. 19–20)։

Այս պայմաններէն դուրս Մեսրոպեանները կը դատապարտէ և հրահանգ կու տայ քահանաներուն, որ այնպիսի անսանաներ երբ մահամերձ հիւանդանան վանքէն դուրս՝ ո՛չ հաղորդութիւն տան անոնց՝ վերջին ժամուն, ոչ ալ օրինաւոր թաղում ընեն՝ վախճանումէն ետքը։ Բացառութիւն կ՚ընէ զղջացողին համար. զղջում մը՝ որ վկաներով պէտք է հաստատուի, այնպէս որ եթէ մահը չհանէր՝ վանք պիտի վերադառնար։ Բայց այս բացառութիւնը շատ անձուկ իմաստ մը ունի. այսինքն՝ այսպիսիներու թաղման կարգը աշխարհականաց պէս պիտի ըլլայ և ոչ թէ «որպէս քահանայի կամ կրօնաւորի»։

Շնորհալին մասնաւորապէս դիտել կու տայ՝ թէ վանքէն դուրս վախճանող բոլոր կրօնաւորներու մասին այդպէս «անընտրաղաբար» վարուելու չէ. շատեր կան, կ՚ըսէ, որոնք վանքէն դուրս ելած՝ իբր հիւր կը բնակին աշխարհի մէջ. ուրիշներ ալ՝ որոնք «ձեր ու տկար գոլով մարմնով» վանքերու մէջ չեն կրնար գտնել պէտք եղած խնամքը՝ «բնակին յաշխարհի ուղիղ և ոչ բամբասելի վարուք». երբ այսպիսիներ վախճանին՝ «պատուով թաղեսցին որպէս զծառայս Աստուծոյ» (անդ, եր. 20)։

Ճշմարիտ կրօնաւորները կը զգուշացնէ նոր տիրող սովորութենէ մը, այսինքն՝ այգեգործութենէ։ Շնորհալիի ատեն այգեստէր ըլլալու սովորութիւն մը ելեր է վանքերու մէջ։ Ասիկա «անվայելուչ է, կ՚ըսէ, կրօնաւորական կարգի»։ Կրօնաւորական աղքատութեան հետ հակասական կը գտնէ այգեսիրութիւնը. հիմնական կրօնաւորներէն շատեր ժառանգութիւն (հարստութիւն) չունէին, կ՚ըսէ, աշխարհի մէջ, և վանքերու մէջ կրօնաւորուելէ ետքը ժառանգութեան տէր եղան, հարստացան և ոչ միայն անհրաժեշտ պէտքերու անկարօտ եղան, «այլև աւելորդաց լցան՝ և աշխարհի հոգովք և երկօք տաժանեալք, և ասա անհոգութեամբ և հեշտութեամբ ստուարաչեալք»։

Այգեգործութեան ախտը այնքան տարածուած էր՝ որ վանականներ կը մրցէին իրարու հետ, թէ ո՛վ իր ընկերէն աւելի ընդարձակ և պարարտ հողի մը վրայ այգի պիտի տնկէ, թէ նոր տունկերը ի՞նչպէս պիտի մեծցնէ, չգիտցողը գիտցողէն կը սորվի թէ ի՛նչպէս հերկելու է այգին, եղներո՞վ թէ ձեռքով. «ձեռամբք և բրել ձեռամբ փայտատօք և բահիւք». յօտելու կերպերը ևն. մանրամասն կը զանազանեն և այս բոլորը՝ որպէսզի շատ գինի ունենան. թողում, կ՚ըսէ, պատուաստի մասին թափուած հնարքները, որոնք գիրար կը գերազանցեն. «ալ մոլեգնութեան հասած է այս ախտը, զգի ոչ զտիւն ոմանք բաւական համարեն ժամանակ գործելոյ, այլև զգիշերն և խառնեն ընդ տուընջեանն»։ Այլ և այլ տեղերէ կամ վանքերէ այգեստէր կրօնաւորներ երբ իրարու կը հանդիպին, սովորական ողջոյնէ ետքը իրարու ողջութիւնը չեն հարցներ, հոգևոր բաներու վրայ չեն խօսիր, այլ կ՚ըսեն. «այսամ ամի, ո՛վ եղբայր, զի՞րդ է պտղաբերութիւն քոյին տնկոցն». այս տարի որթատունկերդ ի՞նչպէս են, պտուղ ունի՞ն ևառաւել թէ նուազ». միւսն ալ թախծեալ սրտով կը պատասխանէ. «ի՞նչ ըսեմ, գժբախտութիւններ պատահեցան. ոմանք թրթուններէ ջնասաւեցան, ոմանց ծաղիկները թափեցան. ողկոյզներէն շատերն ալ արեւը զարկաւ չորցուց, ոմանք ալ փտեցան. չգիտեմ ի՞նչ ընելու է»։ Ընկերը խրատ կու տայ թէ մէկ մասը պատուաստելու է, ուրիշներն ալ այլևայլ փորձուած միջոցներով կը յանձնարարեն գարմանել։

Շնորհալին այս վարակուած ախտին առաջքը առնելու համար մեղմ միջոցներու կը դիմէ. չ՚ուզեր որ Քրիստոսի աշակերտներուն պէս բոլորովին վազ անցնին տնկա-

digitised by A.R.A.R.@

գործութենէ և ինչք դիզելէ, որպէսզի իր խրատներէն չխոժոռին և երեսնէն դէպի արևմուտք չդարձնեն. ասոր համար կը յորդորէ որ ազահութիւնը և քաց վանոն այգիներու և ինչքերու ստացումէն և աւելորդները տան սաղքատաց և կարօտեալոց»։ Փիլիպէն բաժին հանեն Աստուծոյ սեղանին և այսպէս ամէն կրօնաւոր իր կենդանութեան մատակարարելով իր ունեցածը, տոհմի չտայ որ իր վախճանումէն ետքը իր թոզած հարստութեան երեսէն գէշութիւններ պատահին. «զի բազմաց աներկիւղից պատճառ կարտեան լինի հոգւոյ՝ ստացուած մեռեալոյն, յորժամ ժառանգէ, անատակ և անկարգ գնացիւք վատնելով զամենայն, որ միաստու պատճառ փոխանակ փրկութեան լինիցի ինչքն այն ստացողին իւրումն ելն. (անդ, եր. 21–24 և շար.)։

Շնորհալին մանաւորապէս կը ծանրանայ արբեցութեան վրայ և կը զգուշացնէ այգեպէտ կրօնաւորները, «պարկեշտութեամբ և օրինաւոր ըստ կարգի կրօնաւորացս միայն արտօնելով։ Վասնզի մէկուն անկարգութեամբ բոլոր կարգակիցները կը բամբասուին աշխարհականներէն և այլազգիներէն։ Այս խրատներու պէտք ունեցողներուն քով չտեր կը գտնէ Շնորհալի, «որոնք բոլորովին չարքաշ են և ժուժկալ. «ո՛չ զամենեցուն ասեմք. զի բազումք ի ձէնջ և ոչ հացիւ և ջրով յագին վասն սիրոյն Աստուծոյ, թող թէ աւելորդ, կերակրովք և գինեաւ» (անդ, եր. 27 և շար.)։

Անգամ մըն ալ կը պատուիրէ որ կրօնաւորներ վանքէ վանք չշրջին, «չինչ պատճառի մը համար թողլով իրենց առաջնորդն ու ընկերակիցները. ասի «անհաստատութեան քարուց է նշանակ»։ Այս է պատճառը որ կրօնաւորներէն շատեր անհրահանգ են ու անխրատ և աննոպանդ իրենց մեծերուն. գրեթէ ամէնքն ալ ասանկ են «բաց ի սակաւուց»։ Առաջնորդը կամ վարպետը կամ ծերունիներէն մէկը երբ պարպապէս խօսքով յանդիմանէ կրօնաւոր մը, որ անպատշաճ խօսքի կամ գործի մէջ գտնուեր է, սա գիշերանց կը թողու կը փախչի, իր տիրոջմէն փախչող ծառայի մը պէս, և կը փախչի զայրացած։ Առաջնորդն ալ վախնալով, դասալիք այս կրօնաւորներու երեսէն եկեղեցւոյ գործերը թերի կը մնան. «ներող լինի ամենայն ատակաց եղբօր», այս պատճառով անոնք անխրատ և անկիրթ կը մնան մինչև իրենց վախճանը։ Կը խրատէ որ ոչինչ պատճառներով վանք չփոխեն, Առաջնորդի դէմ չտրտնջան, նոյնիսկ եթէ «արդար գտանիցի ի տրտնջելն» (անդ, եր. 27–29)։

Կը զգուշացնէ գողութենէ, որ կ'երևի թէ հազուագէպ բան մը չէ եղած այդ ժամանակի վանական բարքերուն մէջ ալ. «քանզի անէծք ցաւագինք վասն այլ մեղաց ոչ ևս չարժին ի մէջ եկեղեցւոյ, քան յաղագս գողութեան»։ Կ'արգիլէ նոյնիսկ անէնչան համարուած գողութիւնները իբր արդիւնք իր աշխատութեան եւյլն։

Շնորհալին շատ կը ցաւի որ կրօնաւորութեան մէջ ոչ միայն գողութիւն կայ, այլ նաև գողութեան համար կը սատեն, մեծ մեծ երդումներ կ'ընեն։

Պակասմիտ կրօնաւորներէն շատեր բարոյական գողութիւններ ալ կ'ընեն՝ այսինքն՝ երբ իրենց անձնական գործին համար եռանդով կ'աշխատին, եկեղեցւոյ կամ վանքի գործերուն համար կը ծուլանան և կը յուլանան. «ե՛ւ դարձեալ ոմանք ի պակասամիտ կրօնաւորաց, որք թէպէտև ոչ զարտաքին իրս, այլ զանձին իւրեանց զօրութիւն և զյաջողութիւն գողանան յեկեղեցւոյն, ի յիւրեանց առանձնական գործս արի և արթուն լինելով, և ի հասարակացն՝ հեզգ և պղերգ» (անդ, եր. 30–32)։

Կը զգուշացնէ բամբասանքէ և խեղկատակութենէ. այս վերջին մոլութիւնը շատ կը շեշտուի հին կրօնաւորական բարքերու մէջ. «ամա՛նաւանդ որք ի խեղկատակութիւն սովորեցուցանեն և զլեզուս և ի ծիծաղական բանս, նման լինելով խաղալկացն և հացկատակաց, և որք ի ծիծաղելն այլայլեն զդէմս և կարկաջեն անմտաբարս» (անդ, եր. 32–33)։

Արտատպուած Լայս Շաբաթաթերթէն, 1906

(Շարունակելի՝ 4)

digitised by A.R.A.R.@